

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 5

28.12.2020թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացիկ վիճակի վերաբերյալ վերաբերյալ.

1.1. Հանձնարարել դեկաններին և ստորաբաժանումների ղեկավարներին.

- 2019-2020 ուս. տարվա վարձավճարի և առարկայական պարտքեր ունեցող, 2020թ. պատերազմին չմասնակցած ուսանողներին հեռացնել համալսարանից.

*Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա» կրթական ծրագրի 2020-2021 ուստարվա 4-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի **Աննա Նշանի Հայրապետյանին** առարկայական տարբերությունները չհանձնելու պատճառով հեռացնել համալսարանից:*

- ձևակերպել համալսարանի ցերեկային ուսուցման համակարգի ավարտական կուրսերի 2019-2020 ուս. տարվա վարձավճարի պարտքեր ունեցող 2020թ պատերազմի մասնակից ուսանողների փոխադրման հրամանները (պարտավորագրերով) և ուսանողներին տալ մեկ ամիս ժամանակ վարձավճարի պարտքերը մարելու համար,

- 2019-2020 ուս. տարվա վարձավճարի պարտքեր ունեցող 2020թ պատերազմի մասնակից ուսանողներին (ցերեկային (1-3 կուրսեր) և հեռակա (1-4 կուրսեր) ուսուցման համակարգերում) վարձավճարների պարտքերը մարելու համար տալ մեկ ամիս ժամանակ, ֆինանսական պարտավորությունների կատարման դեպքում փոխադրել 2020-2021 ուս. տարի և ներկայացնել ՀՀ կառավարության կողմից սահմանված 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարի փոխհատուցման,

- 2020թ. պատերազմին մասնակցած ուսանողների տեղեկանքները ձևակերպել սահմանված ձևաչափին համապատասխան. տեղեկանքում նշել, որ մասնակցել է մարտական գործողությունների:

1.2. Հանձնարարել ՌԻԳԿ վարչության պետ Դ. Հայրապետյանին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին, Սիսիանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Տ. Վանդուցին և Վանաձորի մասնաճյուղի տնօրենի պարտականությունները կատարող Ա. Շերմազանյանին.

- Հաշվի առնելով 2020թ պատերազմական գործողությունների արդյունքում ազգաբնակչության բարոյահոգեբանական ծանր վիճակը հեռակա ուսուցման համակարգի (ՀՈՒԴ, Սիսիանի և Վանաձորի մասնաճյուղեր) ուսանողներին ընձեռել

